ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2019թ. N 06

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019ԹՎԱԿԱՆԻ ՀՈՂԱՅԻՆ ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42–րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հոկտեմբերի 23-ի «Հայաստանի Հանրապետության հողային հաշվեկշիռը կազմելու կարգը հաստատելու մասին» թիվ 656 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետով

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

Համաձայնություն տալ Քարաձոր համայնքի 2019 թվականի հուլիսի 1-ի դրությամբ կազմված հողային ֆոնդի առկայության և բաշխման մասին հաշվետվությանը (հողային հաշվեկշռին) համաձայն հավելվածների (22 և 22ա ձևերի):

Համայնքի ավագանու անդամներ		Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գևորգյան	Դավիթ		-	-
Կարապետյան	Արսեն Ա.		-	-
Կարապետյան	Վահրամ		-	-
Պետրոսյան	Իշխան		-	-

Համայնքի ղեկավար Հ.Ռոստոմյան

2019թ. հուլիսի 24
գ. Քարաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2019թ. N 07

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԱՄՓՈՓՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասով՝ համայնքի ավագանին հավանություն տվեց 2019 թվականի երկրորդ եռամսյակի բյուջեի կատարման մասին համայնքի ղեկավարի ներկայացրած հաղորդմանը՝ համաձայն հավելվածի:

Համայնքի ավագանու անդամներ	Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գևորգյան Դավիթ		-	-
Կարապետյան Արսեն Ա.		-	-
Կարապետյան Վահրամ		-	-
Պետրոսյան Իշխան		-	-

Համայնքի ղեկավար Հ.Ռոստոմյան

2019թ. հուլիսի 24
գ. Քարաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Քարաձոր համայնք, գ. Քարաձոր , հեռ. 098-56-16-00

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» հուլիսի 2019թ. N 08

ՔԱՐԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7–րդ կետին, համայնքի ավագանու 2017 թվականի հունիսի 9-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Քարաձոր համայնքի կամավոր խնդիրները, դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին» թիվ09-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալական անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավմանվերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունները.

Քարաձոր համայնքի ավագանին որոշում է.

1. Բավարարել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:
2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետումհատկացված գումարները տրամադրել բնակիչներին:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը և հաջորդող օրվանից:

Համայնքի ավագանու անդամներ		Կողմ	Դեմ	Ձեռնպահ
Գևորգյան	Դավիթ		-	-
Կարապետյան	Արսեն Ա		-	-
Կարապետյան	Վահրամ		-	-
Պետրոսյան	Իշխան		-	-

Համայնքի ղեկավար՝ Հ.Ռոստոմյան

2019թ. հուլիսի 24